ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հ. Խ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվեց 1914 թ. օգոստոսի 1-ին (հուլիսի 19-ին)։ Առաջինը Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, ապա մեկը մյուսի հետևից պատերազմի մեջ մտան մյուս պետությունները, շուրջ 38 երկրներ՝ ավելի քան մեկուկես միլիարդ բնակչությամբ, և պատերազմի համար մոբիլիզացվեց 74 միլիոն մարդ։ Պատերազմական գործողությունները մղվում էին երեք մայրցամաքներում (Եվրոպայում, Ասիայում, Աֆրիկայում) և ունեին բազմաթիվ ռազմաճակատներ. Արևմտաեվրոպական (ֆրանսիական), Արևելաեվրոպական (ռուսական), Ասիա-Թուրքական (որի մեջ էր մտնում կովկասյան թատերաբեմը), Իտալական, Բալկանյան և այլն։

Պատերազմը սոցիալական բարդ երևույթ է, մասնավոր սեփականության վրա հիմնված դասակարգային հասարակության ծնունդ։ Այն քաղաքականության շարունակությունն է այլ բռնի միջոցներով։ «Պատերազմը ոչ միայն քաղաքական ակտ է,—գրել է ռազմական տեսաբան Կլաուզվիցը,—այլև քաղաքականության իսկական զենք, քաղաքական հարաբերությունների շարունակությունը, նրանց անցկացում ուրիշ միջոցներով»[1]։ Այդ նշանակում է, որ ամեն մի պատերազմի էությունը, բնույթը որոշվում է նրա քաղաքական նպատակով, այսինքն՝ նրանով, թե ով և ինչի համար է մղում պատերազմը։ Տիրապետող դասակարգերը փորձում են իրենց նպատակներն իրականացնել այսպես կոչված խաղաղ ճանապարհով՝ դիվանագիտությամբ, տնտեսական ճնշմամբ, «կուլտուրական ներթափանցմամբ», և երբ դրանք անբավարար են դուրս գալիս, նրանք դիմում են պատերազմի ու փորձում զենքի ուժով իրենց կամքը թելադրել ուրիշներին։ Այդպիսով, պատերազմը դառնում է նրանց կողմից մինչ այդ անցկացվող քաղաքականության շարունակությունը, որն այժմ դրսևորվում է առավել մերկությամբ ու բարբարոսությամբ։

Պատերազմում առկա էին իմպերիալիստական պետությունների երկու գլխավոր խմբավորումները. մեկը «Քառյակ միությունն» էր (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բուլղարիա, Թուրքիա), իսկ մյուսը՝ Անտանտը (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան), որին միացան Ճապոնիան, Իտալիան, ԱՄՆ-ը և բազմաթիվ այլ երկրներ։

Պատերազմական խմբավորումների մեջ ամենագլխավորը անգլո-գերմանական հակասությունն էր, որը և փաստորեն կանխորոշեց կռվող ուժերի տեղաբաշխումը։ Անգլիան արդեն հասել էր իշխող դիրքի համարյա ամբողջ աշխարհում, որի հետ, սակայն, չէր ուզում հաշտվել Գերմանիան։ Խորն էին նաև գերմանա-ռուսական հակասությունները։ Կյանքը ցույց տվեց, որ պատերազմի առաջացման մեջ կարևոր դեր կատարեցին նաև այն հակասությունները, որ կային Գերմանիայի և Ֆրանսիայի միջև՝ Էլզասի և Լոթարինգիայի համար, Գերմանիայի և Ռուսաստանի միջև՝ Կոստանդնուպոլսի և նեղուցների համար, Ռուսաստանի և Թուրքիայի միջև՝ Հայաստանի և Կոստանդնուպոլսի համար, Ավստրիայի և Ռուսաստանի միջև՝ Բալկաններում գերիշխելու համար, Ավստրիայի և Իտալիայի միջև՝ Ալբանիայի համար և

---

[1] Клаузвиц, О войне, т. I, М., 1936, с. 54.

այլն։ Հակասությունների հիմնական հանգուցակետերից և I համաշխարհային պատերազմի բորբոքման պատճառներից մեկը Մերձավոր արևելքն էր, Օսմանյան կայսրության տարածքների բաժանումը։ Եթե Անգլիան ձգտում էր գրավել Միջագետքը, Պաղեստինը, Արաբական թերակղզին, ապա Ֆրանսիան՝ Սիրիան, Կիլիկիան և Արևմտյան Հայաստանի հարավային մասը։

Ռուսաստանը, կախման մեջ գտնվելով անգլո-ֆրանսիական կապիտալից, պատերազմում հանդես եկավ Անտանտի կողմը։ Չնայած դրան, նա ևս ուներ իր զավթողական ձգտումները, որոնց մեջ հատկապես մտնում էին Կոստանդնուպոլիսը, նեղուցներն ու Արևմտյան Հայաստանը։ Եթե ցարիզմը նեղուցները դիտում էր որպես «սեփական տան բանալիներ», ապա Արևմտյան Հայաստանը պետք է դառնար գաղութ, հումքի աղբյուր ու շուկա և ռազմավարական կարևորագույն կետ՝ Մերձավոր արևելքում ամրանալու համար։

Գերմանիայի նվաճողական պլաններում որոշակի տեղ են գրավում Կովկասն ու Հայաստանը։ Նա իր մերձավորարևելյան և ընդհանուր նվաճողական քաղաքականության իրականացման գլխավոր խոչընդոտներից մեկը համարում էր Ռուսաստանը, որի դեմ էլ կատաղի պատերազմ մղեց։

Գերմանիայի դաշնակից Թուրքիան, թեև նրա վասալն էր, բայց ինքն էլ ուներ զավթողական պլաններ։ Ավելին, հետամնաց ու խարխուլ Թուրքիան էլ էր խոսում «դարավոր ձգտումների» մասին և երազում համաշխարհային տիրապետության։ Դեռ մինչև պատերազմը երիտթուրքերը լայնորեն քարոզում էին իրենց քաղաքական ծրագիրը՝ պանթուրքիզմը, որը պարուրված էր կրոնական գաղափարախոսությամբ՝ պանիսլամիզմով (բալյուքական պանթուրքիզմ, կրոնական պանիսլամիզմ)։ Թուրքական կառավարությունն այդ ռազմաշունչ ծրագիրը քարոզելու նպատակով «իր էմիսարներին ուղարկեց մուսուլմանական բնակչությամբ բոլոր երկրները», որպեսզի նրանք կրոնական հողի վրա պատվաստեն «մոլեռանդություն ժողովրդական զանգվածների մեջ»։ Երիտթուրքերի ցնորամիտ ծրագիրը պահանջում էր իսլամ դավանող բոլոր ժողովուրդներին միավորել մի պետության մեջ՝ թուրքերի գլխավորությամբ։ Նվաճողական ազգայնականությամբ ներծծված այդ պլանով պետք է ստեղծվեր այսպես կոչված «մեծ Թուրան», որը կտարածվեր Իսպանիայից մինչև Չինաստան, Սկանդինավյան թերակղզուց մինչև Աֆրիկա ու Հընդկաստան։ Երիտթուրքերի այս ծրագրերն ունեին ընդգծված հակառուսական ոգի։ Իր նվաճողական պլաններն իրականացնելու համար Թուրքիան մեծ հույսեր էր կապել Գերմանիայի հետ, ընդ որում, գերմանա-թուրքական զինակցության հիմքում դրվում էր ռուսների դեմ պայքարելու պահանջը։

Թուրքիայի հարձակումով (1914 թ. հոկտեմբերի 31) սկսվեց ռուս-թուրքական պատերազմը։ Շուտով բացվեց Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ռազմաճակատը, որի պատերազմական գործողությունները տեղի ունեցան հիմնականում Արևմտյան Հայաստանում։ Սուլթանական Թուրքիան պատերազմի մեջ մտավ՝ ունենալով ոչ միայն համաթուրանական զառանցական ծրագիր, այլև հայ ու այլ ժողովուրդների ոչնչացման գազանային պլան, որը մշակվել էր նախօրոք, իսկ պատերազմի ժամանակ այն ավելի կոնկրետացվեց ու իրականացվեց։ Հայերի բնաջնջման պլանը թուրք բռնակալների կողմից մտահղացվել է դարեր շարունակ և իր ավարտումն ստացել երիտթուրքերի օրոք։ Երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը պատահական երևույթ չէր, այլ բռնակալական Թուրքիայի մշտապես իրականացվող հայասպան գծի անմիջական շարունակությունը։ Հայ ժողովրդի նկատմամբ նույնպիսի վերաբերմունք ունեին գերմանական իմպերիալիստները, որոնք ոչ միայն համամիտ էին իրենց կամակատար դաշնակից Թուրքիային, այլև ամեն կերպ ոգեշնչում և աջակցում էին նրան։

Սկսված պատերազմը փորձության շրջան էր քաղաքական բոլոր հոսանքների և կուսակցությունների համար։ Պատերազմող երկրների բուրժուական և մանրբուրժուական կուսակցություններն անվերապահորեն կանգնեցին պատերազմը արդարացնելու ուղու վրա, առաջ քաշեցին «Հայրենիքի պաշտ-

պանություն», «Աղատություն և մշակույթ» կարգախոսները։ Նրանց հետևից գնացին նաև Երկրորդ ինտերնացիոնալի մեջ մտնող կուսակցություններից շատերը, որոնց որոշ առաջնորդներ մտան բուրժուական կառավարությունների մեջ։

Անդրկովկասում ևս քաղաքական հոսանքներն ու կուսակցությունները պատերազմի նկատմամբ արտահայտեցին իրենց վերաբերմունքը։ Բուրժուազնվականական կուսակցությունները, մտավորականության հետադիմական մասը պատերազմի մեջ Ռուսաստանի մուտքը դիմավորեցին «հայրենասիրական» ցույցերով։ Թիֆլիսում, Բաքվում և երկրամասի այլ քաղաքներում տեղի ունեցան «հայրենասիրական» հանրահավաքներ։ Վրաց ազնվականության, Թիֆլիսի, Բաքվի և այլ քաղաքների քաղաքային դումաների արտակարգ ժողովները, նավթարդյունաբերողների խորհրդի համագումարը, խոշոր կապիտալի ներկայացուցիչները արտահայտվեցին պատերազմի համար հանգանականություն կատարելու օգտին։ Եկեղեցիներում ու մզկիթներում արարողություններ էին կատարվում ռուսական զենքի հաղթանակի համար։ Պատերազմում ցարական կառավարությանը աջակցելու օգտին հանդես եկան նաև մանրբուրժուական կուսակցությունները։ Վրացական սոցիալ-ֆեդերալիստների օրգան «Սախալիո պարցելին» («Ժողովրդական թերթիկ») «Հայրենիքի պաշտպանության» կոչ էր անում ժողովրդին և Գերմանիայի դեմ պատերազմի՝ մինչև նրա հաղթական ավարտը։ Պատերազմում ցարիզմին անվերապահորեն աջակցելու հայտարարություն արեցին նաև «Մուսավաթ» կուսակցության խոսափող «Աչիդ սյոզը» («Բաց խոսք») և Պետական դումայի մուսուլմանական ֆրակցիան։ Իսկ ադրբեջանական պանիսլամիստները հանդես եկան Թուրքիային աջակցելու օգտին։ Թուրքական կառավարող շրջանների թելադրանքով նրանք Ռուսաստանի դեմ «սրբազան պատերազմի» կոչով դիմեցին «Կովկասում իսլամի պետության վերականգնման համար»[3]։ Ադրբեջանում ակտիվ աշխատանք փորձեցին ծավալել մինչև պատերազմը Թուրքիա տարագրված պանթուրքական հոսանքի գործիչները։

Պատերազմը շփոթ և տարընթացություն առաջացրեց Անդրկովկասի մենշևիկների և էսէռների շրջանում։ Մենշևիկների մի մասը՝ Ն. Ժորդանիայի գլխավորությամբ, ինչպես և էսէռների առաջնորդներն անցան սոցիալ-հայրենասիրության դիրքերը, քողարկվելով մերթ երկերեսանի, մերթ վայ-հեղափոխական դարձվածքներով։ Մենշևիկների և էսէռների մյուս մասը հանդես եկավ պատերազմի դեմ։ Սակայն հետագայում նրանք ևս անցան պատերազմի պաշտպանության դիրքերը։ Ն. Ժորդանիան կոչ էր անում ժողովրդին՝ ակտիվորեն մասնակցել սկսված «հայրենասիրական պատերազմին»։

Ցարիզմն իր հերթին ամեն կերպ խրախուսում էր մենշևիկների «պաշտպանողական» գործունեությունը։ Մենշևիկները գործում էին լեգալ պայմաններում, հրատարակում իրենց թերթերը։ Պատահական չէ, որ Կովկասի փոխարքայի օգնականը մենշևիկների մասին գրել է. «Ներկայումս ոչ մի անհրաժեշտություն չկա որևէ հալածանքի միջոցառում գործադրել այդ կուսակցության անդամների դեմ»[4]։ Մի այլ փաստաթղթում շատ որոշակիորեն նշվում էր, որ մենշևիկները, համախմբվելով Կովկասյան մարզային կոմիտեի շուրջը, քարոզում են «սոցիալ-հայրենասիրական» գաղափարներ, որոնց նպատակն է ապահովել պատերազմում Ռուսաստանի հաղթանակը[5]։

Հայ քաղաքական կուսակցությունների մեծ մասը նույնպես անցավ ցարիզմի պաշտպանության կողմը։ Պատերազմի հենց առաջին օրերին Հայ հե-

---

2 Տե՛ս М. В. Церцвадзе, Революционное движение в Грузии в 1914—1917 гг., М., 1967, ч. I, с. 40.

3 Տե՛ս Ш. И. Басилая, Закавказье в годы первой мировой войны. Сухуми, 1969, с. 82.

4 Վրաստանի կենտրոնական պետական արխիվ, ց. 63, գ. 2748, թ. 41։

5 Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 430, թ. 6—7։

ղափոխական դաշնակցության կուսակցության արտաքին գործերի կառավարիչ, դոկտոր Զավրիևը բանակցություններ է վարում Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի հետ և նրան հայ ժողովրդի ու իր կուսակցության անունից հավաստիացնում, որ «ներկա պատերազմում հայ ազգը պատրաստ է բազմակողմանի աջակցություն ցույց տալ ռուսական բանակին Կովկասյան ճակատում և որ կուսակցությունը իր ամբողջ ուժերը կդնի փոխարքայի տրամադրության տակ»[6]։ Դաշնակցությունը որոշեց «վճռականորեն հրաժարվել ռուսական կառավարության դեմ ուղղված ամեն մի հեղափոխական ելույթից..., և լիովին սնանկ համարել նման ելույթը ուրիշ սոցիալիստական կուսակցությունների կողմից, ուստի և մերժել նրանց հետ միավորում..., քանի որ նրանք, հետապնդելով ընդհանուր հեղափոխական նպատակներ, կխանգարեն դաշնակցականներին հասնելու իրենց գլխավոր նպատակին՝ թուրքահայերի ազատագրմանը ռուսական զենքի օգնությամբ»[7]։ Եվ զարմանալի չէ, որ ցարական գրաքննությունը արգելել էր որևէ բան գրել Դաշնակցության դեմ։ Դաշնակցության մասին Թիֆլիսի ժանդարմական վարչությունը գրում էր. «Դաշնակցություն կուսակցությունը վերջին ժամանակներս ոչ մի հեղափոխական գործունեություն չի դրսևորում և բացառապես զբաղված է զինվորների ջոկատների կազմակերպմամբ, ուսուցումով և Թուրքիա ուղարկելով՝ թուրքական կառավարության դեմ պայքարի համար, որ թույլ է տվել կայսերական մեծարգո փոխարքան Կովկասում»[8]։

Միակ կուսակցությունը, որի հետ դաշնակցականները հնարավոր համարեցին համաձայնության գալ, հնչակյան կուսակցությունն էր, որը նույնպես կանգնած էր նույն դիրքերում, ուստի և ցանկալի էր «հաշտվել և միավորել գործունեությունը հնչակյանների կուսակցության հետ»[9]։

Ինչպես լիբերալներն ու դաշնակցականները, հնչակյան կուսակցությունը ևս փորձում էր հիմնավորել Անտանտի կողմից մղվող պատերազմի ազատագրական բնույթը, հակառակ իրենց իսկ մանիֆեստի՝ ընդունված Փարիզում, 1913 թ. հունվարի 30-ին, որտեղ մասնավորապես ասված է. «Մենք սարսափելի ենք գտնում ամեն պատերազմ, որ նկատում ենք իբրև ոճրագործություն, քաղաքակիրթ մարդկության համար ամոթալի։ Մենք կրում ենք մեր սրտում անհաշտ և անսահման ատելություն դեպի այն պատերազմները, որոնց նպատակն էր հափշտակություն, նվաճում և մի ժողովրդի տիրապետություն մյուսի վրա»[10]։ Իսկ պատերազմի ժամանակ (1915 թ.) հնչակյան կուսակցության պաշտոնական կոչերից մեկում արդեն ազդարարվում էր «դաշնակիցներու մղած ազատարար պատերազմի» մասին, որին իր «արյուն բաժինն է տալիս» հայ ժողովուրդը, «դաշնակիցներին մատուցում փայլուն ծառայություններ»[11]։ Նույն թվականին հնչակյանների առաջնորդ Ս. Սապահ-Գյուլյանը հրատարակում է «Ինքնավար Հայաստանը» գրքույկը (Թիֆլիս), որտեղ գովերգում է արևմտյան տերություններին, հատկապես երկինք է բարձրացնում Անգլիային և նրա հետ կապում հայ ժողովրդի ազատագրության հարցը։ «Հայ ազգը,—գրել է նա,—սպասելիք ունի Անգլիայից—մարդկային ազգերի իրավունքների պաշտպան այդ դասական տիրանից»[12]։

Անտանտի պաշտպանությամբ հանդես եկան նաև հայ «սպեցիֆիկները», որոնք, պատերազմի ժամանակ հավաքվելով «Մշակի», ինչպես և դաշնակ-

6 Տե՛ս Լ ե ո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 281։

7 Տե՛ս Մ. Ա ր ո ւ տ ա ն յ ա ն, Հայաստան. 1914—1917, Ե., 1969, էջ 168։

8 ՀՀ Հասարակական քաղաքական կազմակերպությունների պատմության արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՊԱ), ֆ. 4047, ց. 1, գ. 145, թ. 2։

9 Հիսնամյակ—1887—1937, Ս. Դ. Հնչակյան կուսակցություն, Պրովիդանս, ԱՄՆ, 1938, էջ 265։

10 Նույն տեղում։

11 Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության, 1887—1962, հ. Ա, Պեյրութ, 1962, էջ 370։

12 Ս. Ս ա պ ա հ-Գ յ ու լ յ ա ն, Ինքնավար Հայաստան, Թիֆլիս, 1915, էջ 18։

ցական թերթերի շուրջ, ամեն կերպ զանգվածներին հրում էին դեպի պատերազմ։ «Սպեցիֆիկների» «Բանվոր» թերթի խմբագիր Գ. Պեճիկյանը գրում էր. «Մեծ գերմանական իմպերիալիզմը կրում է նվաճողական բնավորություն, դաշնակից դեմոկրատների իմպերիալիզմը, ընդհակառակը, կրում է պաշտպանողական բնավորություն»[13]։ Իսկ նրանց առաջնորդ Դ. Անանունը հայերին կոչ էր անում պաշտպանել հայրենիքը և պատերազմի մեջ հասնել հաղթանակի։ Նա շատ էր մտահոգվում, որ հայերի «հավաքական» ազգային ոգին խարխլվում է սոցիալական հակասություններից։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ավելի ծանրացավ հայ ժողովրդի վիճակը հատկապես Թուրքահայաստանում։ Պատերազմի սկզբին, երբ Էրզրումում հրավիրվեց Դաշնակցության համագումարը, երիտթուրքերը «շտապեցին Էրզրում ուղարկել իրենց ներկայացուցիչներին, որպեսզի կուսակցությունը (Դաշնակցությունը—Հ. Դ.) պարզորոշ հայտարարի իր ցանկության մասին՝ օգնելու Թուրքիային և պաշտպանի նրան, կազմակերպելով ապստամբություն Կովկասում ռուս-թուրքական պատերազմի հայտարարման դեպքում»։ Երիտթուրքերի նախագծով հայերը պետք է պարտավորվեին «կազմակերպելու կամավորների լեգեոններ և ուղարկեն Կովկաս...»։ Թուրքերը ձգտում էին «հավատացնել հայերին, որ ապստամբությունը Կովկասում անխուսափելի է, որ շուտով թաթարները (ադրբեջանցիները—Հ. Դ.), վրացիները, լեռնականները կապստամբեն, և որ հայերը պետք է հետևեն նրանց օրինակին։ Նրանք նույնիսկ զբաղվում էին Կովկասի ապագա աշխարհագրական քարտեզով...»[14]։

Հայ ժողովուրդն իր ապագան ինչպես առաջ, այժմ էլ կապում էր ռուս ժողովրդի հետ։ Երբ ծագեց համաշխարհային պատերազմը, Թուրքահայաստանի հայերը իրենց ազատագրության հույսը ամբողջովին կապեցին ռուսական զենքի հաղթանակի հետ։ Հայերի հայրենասիրական ձգտումները, սակայն, օգտագործվեցին ցարիզմի կողմից, որի նյութական աջակցությամբ կազմակերպվեց կամավորական շարժումը և ստեղծված ջոկատները դրվեցին ռուսական կովկասյան բանակի տրամադրության տակ։ Հայկական կամավորական ջոկատներին զենք տրվում էր այն պայմանով, որ նրանք մեկնեն Թուրքահայաստան և տեղի հայերին ապստամբության հանեն Թուրքիայի դեմ։ Բացի կովկասահայ և Ռուսաստանի այլ մասերում բնակվող հայ երիտասարդներից, կամավորական ջոկատների շարքերը համալրելու էին շտապում շատ երիտասարդներ Բուլղարիայից, Ռումինիայից, Եգիպտոսից, Ամերիկայից։ Հայկական կամավորական ջոկատների ստեղծման նախաձեռնությունը իրականում պատկանում էր ցարական իշխանություններին։ 1915 թ. Երևանի նահանգի ժանդարմական վարչության պետը ներքին գործերի մինիստրի օգնականին գրած իր զեկուցագրում նշում էր, որ Դաշնակցությունը որևէ հակակառավարական միջոցառում չի ձեռնարկում և իր բոլոր ուժերն ու նյութական միջոցները տրամադրում է կամավորական ջոկատների կազմակերպմանը։ Կամավորական ջոկատների ստեղծման գործում լայն աշխատանք ծավալեց նաև Ս. Դ. Հնչակյան կուսակցությունը։

Օգտագործելով հայ ժողովրդի ազգային զգացմունքները և պատերազմի հետևանքով ստեղծված «բարենպաստ վիճակը»՝ ցարական իշխանությունները հայ ազգային կուսակցությունների աջակցությամբ ստեղծեցին մի քանի կամավորական ջոկատներ, որոնք մեծ մասամբ կազմված էին արևմտահայերից։ Նրանք լավ գիտեին տեղանքը և կարող էին հմտորեն կատարել հատկապես հետախուզական գործողություններ։ Սակայն կարևորը ոչ թե հարցի ռազմական կողմն էր, այլ՝ քաղաքական։ Ցարիզմին բոլորովին չէր

---

18 Բանվոր, 1917, № 12։

14 Центральный государственный архив Октябрьской революции (այսուհետև՝ ЦГАОР), ф. 102, оп. 1912, ед. хр. 14, л. 37—40.

հետաքրքրում արևմտահայության փրկության հրատապ խնդիրը. այդ դեպքում նա Կովկասյան ռազմաճակատում կկենտրոնացներ ռուսական բանակ կանչված 250 հազար հայերին, որոնք հերոսաբար կկռվեին իրենց դարավոր թշնամու դեմ։ Սակայն ցարական կառավարությունը, հասկանալի պատճառներով, չդիմեց դրան, որովհետև հայերը կունենային կենտրոնացված զինվորական ուժ՝ իր որոշակի ռազմական հաղթանակներով, որի հետ հարկ կլիներ հաշվի նստել և «ընդառաջել» հայ ժողովրդի ազգային իղձերի կատարմանը՝ թեկուզ ինքնավարություն տալու պայմանով։ Դրանով հանդերձ, ցարիզմը դեմ չէր Արևմտյան Հայաստան մտցնել խորհրդանշական հայկական ուժ, որպեսզի ամբողջ աշխարհի առաջ հաստատի իր մղած պատերազմի «ժողովրդա-հայրենասիրական բնույթը» և «մարդասիրությունը քրիստոնյա նահատակի» նկատմամբ։ Հենց այդպիսին պետք է լինեին հայ կամավորական ջոկատները։ Նրանք (ընդամենը 8—10 հազար հոգի) ինքնըստինքյան վերցրած խոշոր ռազմական ուժ չէին (մեկ ու կես միլիոնանոց բանակ՝ Կովկասում), բայց քաղաքական նկատառումներով ցարիզմի համար ունեին խիստ կարևոր նշանակություն, մանավանդ որ նրանց մեջ էին համախմբվում արևմտահայեր ոչ միայն Ռուսաստանից, այլ նաև Թուրքիայից։

Մինչ այդ արդեն թուրքական կառավարությունը խնամքով նախապատրաստում էր հայ ժողովրդի արևմտյան հատվածի զանգվածային բնաջնջումը։ 1915 թ. մարտին իր հրեշավոր պլանների «բարոյական» արդարացման նպատակով «թուրքական կառավարության կողմից Կոստանդնուպոլսում Դաշնակցություն կուսակցությանը առաջարկություն է արվել այն մասին, որպեսզի հայերը անցնեն Թուրքիայի կողմը։ Այդ առաջարկությունը արվել է Գերմանիայի ճնշման ներքո, որպեսզի այդ ճանապարհով նրանց (հայերին—Հ. Դ.) կտրեն Ռուսաստանից և թեքեն դեպի Թուրքիան»[15]։ Թուրքական կառավարությունը նույն ժամանակ ևեթ իր «անկեղծությունը» հաստատեց հայերի նկատմամբ նոր բռնություններով։ Նա «գաղտնի հսկողություն սահմանեց Թուրքիայում ապրող հայ գործիչների նկատմամբ», որոնցից շատերը «ձերբակալվեցին Կոստանդնուպոլսում և բանտարկվեցին», իսկ «էնվեր փաշան մերժեց պատրիարքի միջնորդությունը հայերի վիճակի թեթևացման մասին», դա բացատրելով նրանով, որ «հայերը կազմակերպել են կամավորական ջոկատներ և կռվում են Թուրքիայի դեմ ռուսական բանակի շարքերում՝ Կովկասյան ճակատում»[16]։ Ռուսաստանի դեմ միասնական պայքարի մասին Թուրքիայի առաջարկը, բնականաբար, մերժվեց։ Հայերը շարունակում էին հուսալ, որ Ռուսաստանի հաղթական պատերազմի շնորհիվ կբարելավվի թուրքահայերի դրությունը և նրանց կտա «ինքնորոշում»։

Գնալով մեծ ծավալ էր ստանում կամավորական շարժումը, որից, սակայն կային նաև դժգոհություններ։ Այդ առումով հետաքրքիր է Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետի հետևյալ հաղորդումը՝ ոստիկանության դեպարտամենտին, 1915 թ. օգոստոսի 6-ին. «Շտաբում (հայ կամավորների—Հ. Դ.) անհանգիստ տրամադրություն է տիրում այն լուրերի ազդեցության տակ, թե իբր ռուսական կառավարությունը փոխել է իր կարծիքը հայկական ջոկատների հարցում և նրանց ուղարկում է առաջավոր գիծ, իսկ կանոնավոր զորքը գնում է նրանց հետևից։ Այդպիսի գործողություններով, իբր թե, մտածում են ոչնչացնել կամավորական հայկական զորքերը՝ դրանով իսկ հայ ժողովրդին պատերազմի ավարտից հետո զրկելով ինքնավարության պահանջի աջակցությունից։ Նախատեսվում է դադարեցնել կամավորների հավաքագրումը, բայց դրա դեմ, ասում են հանդես է եկել Անդրանիկը, գտնելով, որ անհրաժեշտ է պայքարել ռուսների հետ միասին, քանի որ հակառակ դեպքում ռուսական կառավարությունը կձերբակալի հայ բոլոր ղեկավարներին և վրեժ կլուծի հայերից։ Պատերազմին կամավորների հե-

15 Նույն տեղում, оп. 1915, ед. хр. 14, л. 74.

16 Նույն տեղում։

տագա մասնակցության հարցը Թուրքիայի դեմ բաց է մնում»[17]։ Կամավորական շարժումը աստիճանաբար վերածվեց ազգային որոշակի ուժի։ Ցարական կառավարող շրջանակներում, ինչպես վկայում է ոստիկանության դեպարտամենտի դիրեկտորի գրությունը, սկսեցին վախենալ, որ «Ռուսաստանի կողմից Հայաստանին ինքնավարություն տալուց հրաժարվելու դեպքում այդ կամավորները պետք է ներկայանան պատրաստված, զինված կադրերով՝ ռուսական կառավարության դեմ պայքարի համար և զենքը ձեռքին նվաճեն «աղատ Հայաստան»[18]։ Ցարական կառավարությունը հետագայում խոչընդոտեց կամավորական շարժման զարգացմանը, անցավ նրա «կծկման» քաղաքականությանը, և, վերջապես, կամավորական ջոկատները ապակազմավորվեցին՝ տարրալուծվելով ցարական բանակի կանոնավոր զորամասերի մեջ։

Պատերազմի նկատմամբ յուրահատուկ վերաբերմունք ունեին Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները։ Պատերազմը համարելով իմպերիալիստական՝ նրանք երկրամասի ժողովուրդներին կոչ էին անում այն վերածել քաղաքացիականի։ Շուտով նրանք տարբեր ճանապարհներով տպագրեցին և տարածեցին պատերազմի վերաբերյալ լենինյան փաստաթղթերը, կազմակերպեցին մի շարք հակապատերազմական ցույցեր ու միտինգներ։ 1915 թ. մայիսի 1-ի նախօրյակին Թիֆլիսի բոլշևիկները հրապարակեցին «Ընկեր բանվորներ» պրոկլամացիան, որի հեղինակը Պ. Ա. Ջափարիձեն էր[19]։

Պրոկլամացիայի տեքստը հաստատվեց 1915 թ. ապրիլի 9-ին տեղի ունեցած ժողովում, որի մասին տեղեկություններ է հայտնում Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետը՝ ոստիկանության դեպարտամենտի ուղարկած զեկուցագրում (1915 թ. մայիսի 9-ի)։ Որոշվեց կոչը հրապարակել մայիսի 1-ին։ Նրա տպագրումը հանձնարարվեց Ս. Թավգիշվիլուն և մի հայի, որը «իր հետ ժողով էր բերել Պետական դումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի դեկլարացիայի պատճենը»։ Կոչի հրապարակման համար ստեղծվեց հանձնաժողով, որի մեջ մտան Ջափարիձեն, Թավգիշվիլին, մի հայուհի, հայ «Վասիլին» և այն հայը, որն իր հետ բերել էր սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի դեկլարացիայի պատճենը[20]։ Բոլշևիկյան այդ կոչը ապրիլի 29-ի գիշերը տպագրվեց և տարածվեց Ասատուր Կախոյանի կողմից (II Ինտերնացիոնալի Կոպենհագենի կոնգրեսի մասնակից)՝ մի երիտասարդ բանվորի միջոցով[21]։ Պրոկլամացիան լայնորեն տարածվեց Անդրկովկասի աշխատավորության և Կովկասյան ռազմաճակատի զինվորների շրջանում։

Մինչ այդ, կովկասյան մենշևիկները շարունակում էին անվերապահորեն պաշտպանել ցարիզմի քաղաքականությունը։ Ներքին գործերի մինիստրի օգնականի՝ 1916 թ. հունվարի 31-ի զեկուցագրից պարզորոշ երևում է, որ մենշևիկները վարում են «պատերազմը մինչև հաղթական վախճան հասցնելու քաղաքականություն։ Մենշևիկները, նշվում է փաստաթղթում, «...ունեն այնպիսի հայացքներ, որոնք սոցիալիստական դրականության մեջ ստացել են սոցիալ-հայրենասիրական» կամ «հակապարտվողական» անունը և հանդում են այն գաղափարների քարոզչությանը, թե անհրաժեշտ է ամեն կերպ օժանդակել պատերազմին՝ թշնամիների նկատմամբ Ռուսաստանի հաղթանակը ապահովելու նպատակով»։ Այնուհետև ասվում է, որ այդ հայացքները պրոպագանդողը Ն. Ժորդանիայի գլխավորած մարզային կոմիտեն է, որը 1915 թ. հոկտեմբերին Ախալի Սենակիում տեղի ունեցած կոնֆերանսում բանաձև անցկացրեց ռազմաարդյունաբերական կոմիտեների՝ պատերազմին

---

17 Նույն տեղում։

18 Տե՛ս նույն տեղում։

19 П. А. Джапаридзе, Избранные статьи, речи и письма. М., 1958, с. 139.

20 Տե՛ս ЦГАОР, ф. Дп-00(102), оп. 1915(245), ед. хр. 5 ч. 6 л. 39.

21 Նույն տեղում, թ. 45։

մասնակցելու օգտին՝ մինչև «պատվավոր հաշտություն» կնքելը[22]։ Նույն զեկուցագրում միաժամանակ անհանգստություն էր հայտնվում բոլշևիկների գործունեության ակտիվացման առթիվ։ Նրանում ասվում էր, թե բոլշևիկյան կազմակերպությունները «անցկացնում են հայացքներ», որոնք հայտնի են «պարտվողական» անունով և հանգում են այն գաղափարի պրոպագանդմանը, թե անհրաժեշտ է, որ Ռուսաստանը պարտվի, որ անհապաղ դադարեցվի պատերազմը, նպատակ ունենալով դրանով իսկ հեշտացնել հեղափոխության շուտափույթ կազմակերպման և կառավարման հանրապետական կարգի հաստատման հնարավորությունը։ Այդ կազմակերպությունները, մենշևիկների կողմից վերոհիշյալ կոնֆերանսի հրավիրման հետ միաժամանակ, կազմակերպեցին խորհրդակցություն, որտեղ ընդունված են մի շարք որոշումներ բոլշևիկյան ծրագրային պահանջների ոգով[23]։

Պատերազմի կարիքները հոգալու համար նյութական ռեսուրսների և արդյունաբերական արտադրանքի ավելացման նպատակով ցարական կառավարության որոշմամբ տեղերում և կենտրոնում ստեղծվեցին ռազմաարդյունաբերական կոմիտեներ։ 1917 թ. հուլիսին տեղի ունեցավ ռազմաարդյունաբերական կոմիտեների համառուսական համագումարը, որտեղ որոշվեց ստեղծել կոմիտեներին կից «Բանվորական խմբեր»։ Դրանով նպատակ էր հետապնդվում բանվորների ուշադրությունը շեղել հեղափոխական պայքարից, պայմաններ ստեղծել թիկունքի անխափան աշխատանքի համար։ Մենշևիկները և մանրբուրժուական մյուս կուսակցությունները գործնական մասնակցություն ցուցաբերեցին այդ կոմիտեների աշխատանքին, ձեռնամուխ եղան «բանվորական խմբերի» ստեղծմանը։ Այդ գաղափարը նրանք պաշտպանել էին նաև 1915 թ. հոկտեմբերին Ախալի Սենակիում տեղի ունեցած իրենց կոնֆերանսում։

Ռազմաարդյունաբերական կոմիտեների և «Բանվորական խմբերի» ստեղծմանը բացասական վերաբերմունք ցույց տվեցին բոլշևիկները։ Հետևելով կենտրոնի բոլշևիկներին, կովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների խորհրդակցությունը (1915 թ. հոկտեմբեր) եզրակացրեց, որ «Որևէ համագործակցություն ժողովրդին և բանակին դավաճանած ու վաճառած ցարական կառավարության հետ, քվեարկություն ռազմական վարկերի օգտին, մասնակցություն ռազմաարդյունաբերական կոմիտեներին և այլն, անթույլատրելի է բանվորների համար, որովհետև այդ բոլորը երկրի իսկական պաշտպանության իմաստով ոչ մի օգուտ չի կարող բերել և, ընդհակառակը, կարող է ծառայություն մատուցել ցարական կառավարությանը»[24]։

Անդրկովկասում ռազմաարդյունաբերական կոմիտեների ընտրությունների մասին օրենքը հաստատվեց Կովկասյան ռազմական օկրուգի պետի կողմից և հրապարակվեց 1916 թ. հունվարի 24-ին «Կավկազ» թերթում։ Բանվորների շրջանում տարածվեցին նաև մենշևիկների և բոլշևիկների ընդունած բանաձևերի նախագծերը այդ հարցի առթիվ։ Բոլշևիկների Կովկասյան բյուրոն, բացասական վերաբերմունք ունենալով ռազմաարդյունաբերական կոմիտեներում աշխատելու վերաբերյալ, այնուհանդերձ անհրաժեշտ գտավ հարցի վերջնական լուծումը թողնել բանվորներին։ Բոլշևիկների հետևից գնում էին Բաքվի և Թիֆլիսի բանվորները։ Ինչպես նշված է Բաքվի նահանգային ժանդարմական վարչության պետի զեկուցագրում, Բաքվում այդ օրերին տեղի էր ունեցել ընտրողների գաղտնի խորհրդակցություն[25]։ 1916 թ. մարտի 18-ի իր զեկուցագրում Բաքվի ժանդարմական վարչության պետը նշում է, որ բոլշևիկների հանցագործ գործունեության դադարեցման և բոլշևիկյան

22 Տե՛ս ՀՀ ՀԱԿՊԱ, ֆ. 4033, դ. 841, թ. 1։

23 Տե՛ս նույն տեղում, ց. 2, դ. 841, թ. 2։

24 Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Ե., 1978, էջ 20։

25 Центральный государственный исторический архив Грузии, ф. 13 с. оп. 20, ед. хр. 2591, л. 766—778.

կազմակերպությունների լուծարման նպատակով, ընտրությունների նախօրյակին (փետրվարի 19-ին) խուզարկվել են 28 անձնավորություններ, որոնց ավելի քան կեսը ձերբակալվել է[26]։

«Բանվորական խմբերի» ընտրություններից հրաժարվեցին նաև Թիֆլիսի բանվորները։ Ճիշտ է, Թիֆլիսի մի շարք ձեռնարկություններում մենշևիկներին հաջողվեց անցկացնել ընտրություններ, բայց ընդհանուր առմամբ ընտրողների քաղաքային ժողովում ապրիլի 15-ին հաղթանակ տարան բոլշևիկները։ Ընտրությունների նախօրյակին Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետը փոխարքայի գրասենյակի հատուկ բաժնին հույժ դաղտնի հայտնում էր, որ «լուրեր կան, թե սոցիալ-դեմոկրատները (բոլշևիկները—Հ. Դ.) ցանկանում են ժողովը օգտագործել քարոզչական նպատակով և բանվորներին համոզել ընտրությունները բոյկոտելու անհրաժեշտության մեջ»[27]։ Ընտրությունների հաջորդ օրը, ապրիլի 16-ին, նա հայտնում է, որ ընտրությունների ժամանակ բանվորները ճայների մեծամասնությամբ չեղյալ հայտարարեցին ռազմաարդյունաբերական կոմիտեի «բանվորական խմբում» ընտրված վեց թեկնածուների օրինական լինելը[28]։ Երևանում և Ալեքսանդրապոլում «բանվորական խմբի» ընտրություններ տեղի չունեցան։ Ռազմաարդյունաբերական կոմիտեների և նրանցում «Բանվորական խմբերի» ստեղծման՝ բոլշևիկյան բոյկոտի մարտավարությունը բանվորական շրջաններում որոշակի հաջողություններ ունեցան։ Նրանց ընտրությունները շատ տեղերում վեր էին ածվում հեղափոխական ցույցերի։ Ցարական կառավարությունը ստիպված էր արգելել դրանք և ձերբակալել պատերազմի դեմ ելույթների մասնակիցներին։ Բայց դրանք չկարողացան կասեցնել հեղափոխության լաճը։

ПОЛИТИЧЕСКИЕ ПАРТИИ ЗАКАВКАЗЬЯ В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Г. Х. ДАРБИНЯН

Резюме

Первая мировая война стала серьезным испытанием для всех политических течений и партий. Каждая из них по-своему оценивала причины возникновения войны, и большинство стало на позиции безоговорочной защиты собственного правительства.

Свое отношение к войне выработали также и политические организации Закавказья. Некоторые партии защищали претензии России, другие же—Турции. Но в вопросе борьбы до победоносного завершения войны в пользу своей страны все политические партии были едины. Только большевистские организации Закавказья, оценивая войну как империалистическую, призывали превратить ее в гражданскую.

Царизм пытался любой ценой отстранить массы от политической борьбы, проводил выборы военно-промышленных комитетов и «рабочих групп», запрещал несанкционированные митинги и демонстрации. Принятые правительством меры тем не менее не были в состоянии предотвратить развитие революции.

---

26 Նույն տեղում, թ. 104։

27 Նույն տեղում, թ. 112։

28 Նույն տեղում, թ. 113—120։